

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ավանդ «Հաջողության բանաձև»

1. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ`

| | մինչև 30 օր | 31 - 180 օր | 181 - 271 օր | 272 - 365 օր | 366 – և ավել օր |
|-------------------|-----------------|-----------------|-----------------|------------------|------------------------|
| AMD տոկոսադրույքը | - | 8.50% | 10.00% | 10.00% | 10.00% |
| USD տոկոսադրույքը | - | 6.50% | 7.50% | 8.50% | 9.50% |
| EUR տոկոսադրույքը | - | 3.00% | 4.00% | 5.00% | 6.00% |
| | 1-3 ամիս | 3-6 ամիս | 6-9 ամիս | 9-12 ամիս | 12 ամիս և ավելի |
| RUR տոկոսադրույքը | - | 3.70% | 5.50% | 6.50% | 7.30% |

Անկանխիկ փոխարկում AMD, USD, EUR, առանց տոկոսադրույքի կորստի, բանկում սահմանված փոխարժեքով:

- 180-271 օրով ձևակերպված ավանդները` 1 փոխարկման հնարավորությամբ
 - 272-ից ավել օրով ձևակերպված ավանդները` 2 փոխարկման հնարավորությամբ
- Փոխարկումն իրականացվում է ոչ ուշ քան պայմանագրի ավարտից 1 ամիս առաջ Ավանդի արժույթը` AMD, USD, EUR, RUR

Նվազագույն նախնական գումարը` 150 000 AMD, 500 USD/EUR, 12 500 RUR

Համալրման նվազագույն գումարը` 30 000 AMD, 100 USD/ EUR, 2 500 RUR

Ավանդի նվազագույն ժամկետը` 31 օր

Ավանդի առավելագույն ժամկետը` առանց սահմանափակման

Համալրումը` առանց սահմանափակման, բացառությամբ ավանդի ժամկետի լրացումանը նախորդող 30 օրը

Տոկոսագումարի վճարումը` ամենամսյա, տարվա վերջում, հնարավոր է կապիտալիզացիա

Եթե Ավանդը պահանջված չէ սահմանված ժամկետում, այն համարվում է երկարաձգված ցպահանջ ավանդի պայմաններով

Եթե ավանդատուն, մինչև սույն ավանդի պայմանագրում նախատեսված ժամկետի լրանալը, պահանջի ավանդի ամբողջ գումարի վերադարձը, ապա կախված ավանդի փաստացի ներդրված ժամկետից, վերադարձման ենթակա ամբողջ գումարի նկատմամբ կհաշվարկվի այլ տոկոսադրույք, համաձայն բանկում գործող սակագների և բանկային ավանդի տվյալ տեսակի համար Բանկի կողմից հաստատված պայմանների: Ավանդը վաղաժամկետ **մասնակի հանելու դեպքում, մինչև 180 օր պահպանման փաստացի ժամանակահատվածի դեպքում, տոկոսագումարը վճարվում է 0,5% տոկոսադրույքով, 180 օր և 180 օրվանից ավելին պահպանման փաստացի ժամանակահատվածի դեպքում` տոկոսագումարը վճարվում է 3% տոկոսադրույքով:**

տոկոսագումարները հաշվեգրվում են ցպահանջ ավանդի պայմաններով գումարի փաստացի տեղաբաշխման ժամկետի համար

Եթե հավելագրված տոկոսները դեռ չեն վճարվել Ավանդատուին, ապա նրան կվճարվեն միանգամից վերահաշվարկված տոկոսները: Այդ դեպքում, երբ հավելագրված տոկոսները արդեն վճարվել են Ավանդատուին, ապա ըստ կատարված վերահաշվարկի արդյունքի, վճարված տոկոսները պահվում են ավանդի մայր գումարից, և Ավանդատուին վճարվում են տոկոսները ըստ ավանդի գումարի փաստացի տեղակայված ժամկետի: Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների կամ հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը: Բանկային ավանդի պայմանագրով որոշված այն ավանդի համար տոկոսների չափը, որը քաղաքացին ներդրել է որոշակի ժամկետի ավարտից այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:

2. Հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերի լուծման կարգ՝

Ավանդատուի մոտ պայմանագրից բխող պահանջ առաջանալու դեպքում նա կարող է պաշտպանել իր իրավունքները ներկայացնելով բողոք ֆինանսական համակարգի հաշտարարին կամ դիմելով դատարան:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության մինչ Ֆինանսական հաշտարարին դիմելը, Ավանդատուն պետք է ներկայացնի իր բողոք-պահանջը Բանկին, վերջինս պարտավոր է պատասխանել Ավանդատուի պահանջին 10 աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը պարտավոր է քննել Ավանդատուի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից երբ հաճախորդն իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

10 աշխատանքային օր անց պատասխան ստանալուց հետո կամ, եթե պատասխան չէր ստացել, առանց դրա, Ավանդատուն կարող է դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ավանդատուի բողոքը, եթե՝

1. Բողոքը Բանկ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Ավանդատուն չի պահանջել դրամական կամ այլ գույքային հատուցում, Ավանդատուի կողմից պահանջով հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. Բանկի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ավանդատու կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ավանդատուի բողոքը, եթե այն քննվում է դատարանի կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի վճիռ:

Պայմաններ և սահմանափակումներ՝

Ավանդատուն կարող է պահանջել Բանկից վերադարձնել ավանդի գումարը և վճարել համապատասխան տոկոսագումարներ:

Բանկը պարտավոր է ավանդի գումարը վերադարձնել Ավանդատուին նրա առաջին իսկ պահանջով պահպանելով պայմանագրով նախատեսված կետերը:

Ավանդատուն պարտավոր է պահպանել ՀՀ օրենքների, դրան համապատասխան սահմանված բանկային կանոնների, ժամկետային ավանդների ընդունման մասին Բանկում գործող ընթացակարգերի պահանջները:

Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, Ավանդատուին նույնացնելու համար այլ անհրաժեշտ փաստաթղթերի կորստյան կամ փոփոխության դեպքում Ավանդատուն պարտավոր է 10 բանկային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին՝ անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար, ընդ որում Ավանդատուն կրում է հիշյալ ժամկետում Բանկին համապատասխան փոփոխությունների մասին չտեղեկացնելու հետևանքները:

Ավանդի մարման ժամկետից 3 բանկային օր առաջ Ավանդատուն պարտավոր է տեղյակ պահել Բանկին Ավանդի մարման ժամկետի երկարաձգման իր մտադրությունների մասին: Ավանդը կամ տոկոսները ստանալիս Ավանդատուն պետք է Բանկ ներկայանա անձը կամ իրավասությունները հաստատող փաստաթղթով և սույն պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկի մասնաճյուղերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրված ավանդները երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Երաշխավորված ավանդի չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը չորս միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը երկու միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը երկու միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև չորս միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է երկու միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային բանկային ավանդը՝ երկու միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ:

3. Տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ

Ավանդի տարեկան պարզ տոկոսադրույք՝ **10.00%**

Ավանդային պայմանագրի գործողության ժամկետ՝ **365 օր**

Ավանդի գումարի չափը՝ **150,000 AMD**

Տարեկան տոկոսային եկամտաբերության չափը հաշվարկվում է ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r/n)^n - 1$$

որտեղ՝

APY-ը տարեկան տոկոսային եկամտաբերությունն է

r-ը բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված տարեկան պարզ տոկոսադրույքն է

n-ը մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը տոկոսագումարների ամսական վճարումով՝

$$\left(1 + \frac{10\% (\text{պարզ տոկոսադրույք})}{12 (\text{վճարումների քանակ})}\right)^{12} - 1 = 10.47\%$$

Տոկոսների վճարման հաճախականությունը՝ Ամսական

Պայմանագրի ժամկետի ավարտին Կապիտալացում

Բանկը տոկոսների հաշվարկն իրականացվում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար բանկը օգտագործում է 1/366 հարաբերակցությունը): Ավանդի տոկոսների համար եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով համաձայն Եկամտահարկի մասին ՀՀ օրենքի: Ավանդի տարեկան պարզ տոկոսադրույքը հաշվարկվում է ավանդի գումարի փաստացի մնացորդի նկատմամբ: Բանկային ավանդի գումարի վրա տոկոսներն հավելագրվում են ավանդը բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը: Տոկոսային եկամուտը ամսական կտրվածքով հաշվարկվում է ելնելով հետևյալ բանաձևից՝

$$\frac{A * x}{365} * B - 10\% (\text{հարկում})$$

որտեղ A՝ ավանդի գումարն է, x՝ ավանդի տոկոսը, B՝ ամսվա օրերի քանակը:

1 օրվա տոկոսային եկամուտ՝ $\frac{150\,000 (\text{Ներդրված գումար}) * 10 (\text{տարեկան պարզ տոկոսադրույք})}{365 (\text{տարվա օրերի քանակ})} - 10\% (\text{հարկում}) = 41.10 (\text{AMD})$

1 ամսվա գուտ տոկոսային եկամուտ, հաշվի առած հարկումները (10 %)

$$\frac{150\,000 (\text{Ներդրված գումար}) * 10 (\text{տարեկան պարզ տոկոսադրույք})}{365 (\text{տարվա օրերի քանակ})} * 30 (\text{ամսվա օրերի քանակ}) - 10\% (\text{հարկում}) = 41.10 (\text{AMD})$$

Տոկոսային եկամուտի հաշվարկման գրաֆիկ

| | Ամսվա օրերի քանակ | Տոկոսների Կապիտալացման հաշվարկ: Ավանդի մնացորդ (AMD): | Ամսական, Պայմանագրի ժամկետի ավարտին, Նախնական վճարմամբ տոկոսների հաշվարկ: Հաշվարկված տոկոսագումար (AMD): |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|----------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1 ամիս(հունվար) | 31 | 151109.59 | 1109.59 |
| 2 ամիս(փետրվար) | 28 | 152264.65 | 1146.58 |
| 3 ամիս(մարտ) | 31 | 153315.90 | 1035.62 |
| 4 ամիս(ապրիլ) | 30 | 154487.82 | 1146.58 |
| 5 ամիս(մայիս) | 31 | 155630.61 | 1109.59 |
| 6 ամիս(հունիս) | 30 | 156820.22 | 1146.58 |
| 7 ամիս(հուլիս) | 31 | 157980.26 | 1109.59 |
| 8 ամիս(օգոստոս) | 31 | 159187.84 | 1146.58 |
| 9 ամիս(սեպտեմբեր) | 30 | 160404.64 | 1146.58 |
| 10 ամիս(հոկտեմբեր) | 31 | 161591.20 | 1109.59 |
| 11 ամիս(նոյեմբեր) | 30 | 162826.37 | 1146.58 |
| 12 ամիս(դեկտեմբեր) | 31 | 163990.69 | 1072.60 |
| <i>Ընդհանուր հաշվարկված գումար տոկոսային եկամուտ (հաշվի առած հարկումները և նվազեցումները` 2 օր` ավանդը ձևակերպելու, փակելու օրերը)</i> | 365 | 13990.69 | 13426.03 |

Տոկոսների Կապիտալացման դեպքում` յուրաքանչյուր ամիս հաշվարկված տոկոսները հավելագրվում են ավանդի գումարին:

Տոկոսների ամսական վճարման դեպքում` տոկոսները վճարվում են ամսական կտրվածքով:

Տոկոսների պայմանագրի ժամկետի ավարտին վճարման դեպքում հաշվեգրված ամբողջ տոկոսները վճարվում են ավանդային պայմանագրի ժամկետի ավատի դեպքում: